



Շուշանիկ Կուրդիսյան

Նամակ Արշակին 2

31 հուլիսի, <1915>

Եվպատորիա

Սիրելի Արշակ .

Վերջացրի ցելիս վաննաներս ու խիստ գոհ տուն դարձա . . .

Հաղորդածդ նորությունները մեկը մյուսից ախորժելի էին . . . Բայց և այնպես բախտավոր մարդ ես . ի՞նչ է նշանակում կրծքի տակ կրել հավիտենական սիրով բաբախող մի սիրտ, դա մի բացառիկ երջանկության ակն է, որի պատճառով հաճախ ծարավ է մնում իմ տապից պապակած սիրտը . . .

Ստացա «Բանվորի» 15-րդ համարը, ես էլ կարծում էի, թե իմ կոչ նամակիս հետո «Բանվորի» ֆոնդի սնդուկը տրաքվելու էր նպաստներից: Տեսնո՞ւմ ես, ինչ է նշանակում անարժեք խոսքը . դա ինձ խրատ կլինի, հետագայում, հեղինակավոր կոչերով հրապարակ չիջնել, գոնե դու, երդվյալ սոց . դեմոկրատ, կեղեքվողների դատի պաշտպան, մի քանի ռուբլիով պակասեցնելիք փոխառության գումարիդ քանակը և հարգելի իմ այնքան սրտացավ դիմումը՝ նպաստել «Բանվորին» . . .

Էհ, բոլորդ էլ մարդ չեք . . . Ձեզ համար ի՞նչ է գաղափարը, գրականությունը, ճշմարիտը և գեղեցիկը . . .

Այս ձմռան համար գնվելիք պաշարը հարկավոր է եռապատկել . ձմեռը դժվար է լինելու ապրելը, եթե պատերազմը չվերջանա:

Ինձ մնում է ավելի դյուրին վաննաներ: Չեմ ուշանա, ձանձրալի է մենակ
ապրելը, պարապել չեմ կարողանում . . .

Ամսի 3-ին տերհորը տան վարձ եմ տալու կես ամսվա 50 n<ուբլի> . Ինձ մոտ
ունեն միայն ապրելու փող: Իմ բաց նամակում գրածս անհաշիվ է . 100 n<ուբլի>
չի բավականացնի . ուղարկիր 150 n<ուբլի> անպատճառ և մի ուշացնիր, որ
կարողանամ նախօրեք տոմսակ վերցնել:

Երևի ծախսածս քեզ շատ է թվում . ինչ արած, վատ ապրել չեմ կարող, ամեն
ինչ թանկ է ու սակավ: Անցյալ օրը մի ավելի աժան տեղ գնացի կերակուր
ուտելու, ճաշը 2 n . 40 կ . , Արշամը չկերավ և դուրս եկավ սաստիկ բողոքելով իմ
վարմունքի դեմ: Ուր որ երաժշտություն կա, այնտեղ է դիմում ուտելու, և լսած
եղանակների հետ ձեզ հիշում, աչքերիս արտասուքի խոշոր կաթիլներ թափելով:
Լավ տանջվեց իմ վաննաների պատճառով, ես չէի սպասում: